



ԶԱՎԵԼ ԵՍԱՅԱՆ

Քողը

2

Ջեհեր հանրմ իր բոլոր հնարամտութիւնը ի գուր գործածելէ ետքը հաւաներ էր Իպրահիմի աղջիկը կնութեան ուզելու իր տղուն համար, թէ՛ գոհ, թէ՛ դժգոհ էր այս ընտրութենէն. արդեօք իր կտրիճ տղուն, իր գեղեցիկ եւ արժանատր տղուն կարելի չէ՞ր բարձր աղջիկը առնել որ կարենար փեսան մղել դէպ առաջ. անցնելով գայն արագօրէն բոլոր աստիճաններէն մինչեւ փաշայութիւն:

Իր տղան արժանի չէր արդեօք այդպէսի բաղդի մը. անհկա կաղնիի պէս շուք կուտար ուրիշներու վրայ, անհկա իր ձիուն վրայ յաղթանակի երեւոյթ ունէր եւ երբ սրարշաւ կ'անցնէր մեծամեծներու ճերմակ պալատներուն առաջէն՝ գետինը կը թնդար իր ձիուն սմբակներուն ներքեւ եւ կարծես կը բաբախէր սիրտի մը պէս:

Քանի՞, քանի՞ բարձր տեղերէ, աղջիկներ երագած ըլլալու էին այդպիսի սպայի մը վրայ, ու քանիներ վանդակներու շուքին ետեւ՝ շուշանի պէս ճերմակ, բարձր եւ ճկուն, կ'սպասէին այդ երագուած ձիաւորին:

Ջեհեր հանրմ իր միտքը կը պտտցունէր վաղեմի ծանօթներու վրայ ու յանկարծ իր մտածումները կ'ամպոտէին, կը սեւնային...: Իրաւ է որ այդ բարձր տեղերէ առնուած աղջիկները պատուհաս կը դառնային յաճախ. ինքը եւ տղան անոր գերին պիտի դառնային. անոր շփացած պուպրիկի սին փառատենջ քնահաճոյքներուն պիտի գոհուէին. իր տղուն իր առիծին կը վայլէ՞ր կնոջ ոտքերուն առաջ մնալ ու անկէ հրամանի սպասել փոխանակ գայն իր հրամաններու ներքեւ պահելու, սէ՞ր էր այդ պայմաններուն մէջ սէրը, տղուն

ուրախութիւնները հարամ պիտի ըլլային. կը տեսնէր տղան խաղալիք բարձր ազդեցութիւններու, իր յառաջացումին ամէն մէկ աստիճանը ձեռք բերուած դառնութեամբ, ստորնացումներով, եւ ահա յանկարծ իր Չերքէզուհիի վեհ հոգին կ'արթննար ու կ'ընթաստանար:

Չէ, չէ՛, ինչ որ ինք կրէր էր, բաւական էր, ու հիմակ որ այդ տղնուտ եւ լայրծուն միջավայրէն հեռացեր էր ինքը, ի՞նչ սրտով իր գաւակը պիտի մղէր այդ դժոխքին մէջ:

Չէ՛, լաւ է որ իր տղուն կէօնիլը խոնարհ էր. անիկա իր աչքերը իր հասակէն վեր չէր հաներ. անիկա այդ աղջիկը կ'ուզէր ինչպէս տղայ մը խաղալիք մը կ'ուզէ ու պէտք էր գոհացնել զայն:

Ձեռքը հանըմ պահ մը կը մտածէր Ատիլէի վրայ տարտամ արհամարհանքով մը որուն մէջ բարեացակամութեան երանգ մը կար. անիկա կը մտածէր Իպրահիմի աղջկան վրայ ինչպէս գողտր եւ ընտանի անասունի մը վրայ: Ատիլէ կարեւորութիւն չունէր իր աչքին եւ հագի թէ նշանակութիւն կը ստանար իրեն համար Ալի Հասանի ուշադրութիւնը գրաւած ըլլալուն համար:

Ձեռքը հանըմ... մտածեց նաեւ գերբնական միջոցներու դիմել իր գաւակին խելքը խզելու համար այդ անշուք աղջիկէն. նոյնիսկ օր մը սեւ էրթի առաւ վրան, սեւ բէշէով ծածկեց երեսը՝ երթալ խորհրդակցելու համար պառաւ պիւհի մը հետ որ հարկ եղած թըրքմաններու կուտար մէկու սէրը կապելու կամ քակելու համար, բայց վերջ ի վերջոյ ետ կեցաւ այդ այցելութենէն. ինչ որ գրուած էր, թո՛ղ ըլլար. Ալլահին տրամադրութիւններուն դէմ երթալ մեղք էր, եւ յետոյ այդ խոնարհ պայտարի աղջիկը, ինչքան ալ անուսնութեամբ իբր իր տղուն օրինաւոր կինը բարձրացած պիտի ըլլար. չէ՞ մի որ իրականութեան մէջ պիտի մնար հնագանդ աղախին մը, գոր նաեւ հարկ եղած օրը արձակելու կարելիութիւնը կար:

Սալաճաքի բարձունքին վրայ, իր առանձնացած տնակին մէջ ծերունի Իպրահիմ կը շարունակէր ապրիլ՝ իրր տաժանելի կեանքը խաղաղութեան մէջ: Իր հաւատարիմ կինը որ իր երիտասարդութեան առաջին սէրը եւ առաջին բարիքը եղած էր եւ որուն հետ քով քովի քալած էր կեանքի դերբուկներէն, կը խնամէր զինքը մեծ անձնուիրութեամբ:

Համեստ սենեակը միշտ ժպտուն է և հաճելի էր կատարեալ մաքրութեան պատճառաւ որուն միակ զարդը կը կազմէին պատուհանին վանդակներուն ծակերէն ներս սպրդող արեւին ճառագայթները որոնք քմայքով կը խաղային գետնին վրայ:

Երկար ժամեր, Իպրահիմ իր նուաղած աչքերը սեւեռելով այդ խուսափուկ եւ ոստոստուն կէտկիտումներուն, կը մնար առանց մտածումի. երբեմն աշխարհիս մէկ ծայրէն սուրացող հովի ալիք մը յանկարծակի օրօրելով պարտէզի ծառերը, տերեւագարդ ճիւղերու շուքեր արագօրէն կ'անցնէին այդ արեւի արատներուն վրայէն երագի մը պէս:

Օրը քանի մը անգամ մուէզզիսին քաղցրալուր եւ կրօնաշունչ հրաւերէն մղուած, կինը տնական գործերը ընդհատելով կը մտնար սենեակ եւ իր նամագը կը կատարէր, որուն ամուսինը միայն իր աչքերով կրնար հետեւիլ. սրբագան խօսքի ծուէնները կը թափառէին ծերունի հիւանդին գալարուած շրթներուն վրայ, իր հոգին կը վերանար, երկնային ոգի մը կը թեւածէր կարծես միջոցին մէջ, եւ մահուան համակերպութիւնը օրէ օր աւելի կատարելապէս կը գրաւէր իր կարկամած մարմինը:

Իր հոգին ջինջ ու պարզ էր ակէն նոր բոլսող առուակի մը պէս ու ինքզինքին մեղադրելիք բան չունէր. իր յիշատակները նոյնքան վճիտ էին. մեծ եւ սասանեցնող փոթորիկներ անցեր էին իր երկրին վրայէն բայց ինքը մի՛շտ, ճշմարիտ Իսլամի պայծառատեսութեամբ որոշեր էր չարիքը բարիքէն եւ իր հոգին երբեք չէր պղտորուեր այնքան ուրիշներու նման:

Ամենակարող Ալլահը որ մարդիկը կը դատէր ոչ միայն իրենց արարքներէն այլ նաեւ իրենց թագուն դիտաւորութիւններէն, վատահ էր որ գոհ պիտի ըլլար իրմէն: Տեսակ մը փառասիրութիւն մը գգուէր զինքը մտածելով իր ամբողջ կեանքի միջոցին ունեցած արդարադատութեան, ողջնտութեան եւ իմաստութեան: Իբր պարզ պայտար սկսած էր իր կեանքը եւ այնպէս ալ կը վերջացնէր, պատերազմի օրերու մէջ առիծի պէս կռուած էր, բայց խաղաղութեան միջոցին գառնուկի նման հեզ եւ բարեհամբոյր դարձեր էր: Միակ նուիրական գայրոյթ մը կը գոռար իր հոգւոյն մէջ, այն ալ իր հայրենիքին պատառ, պատառ կորսուելուն ցաւն էր: Իր մէջ կար երբեմնի Իսալմներու հերոսական եւ վեհանձն ոգին եւ ինք

միշտ ապրած ըլլալով խոնարհ խաւերու մէջ եւ գրեթէ առանձնացած, այդ ոգին անեղծ մնացած էր եւ պայծառ ճաճանշով մը կը բոցավառէր հարկ եղած բոպէին:

Գեղեցիկ ձայն ունէր իր կինը ու նամագէն ետըք իր ծերունի ամուսինը մխիթարելու համար Գուրան կը կարդար, ինչպէս ժամանակաւ օրօրած էր իրենց երջանկութիւնը տարփաւէտ եւ գորովագին երգերով: Մթնշաղի տարտամ եւ ստուերոտ պահերուն երբ գիշերին մերձաւորութիւնը խորհուրդով կը պատէր իրենց միամիտ հոգիները, այդ ձայնը յստակ եւ եղանակաւոր կ'արտասանէր ամէնասուրբ բառերը:

Այս պարզ, կրօնական, մաքուր մթնոլորտին մէջ խօլ ծաղիկ մըն էր Ատիլէ եւ իր հօրը ամենամեծ ուրախութիւնը:

Երբեմն ինքնամոլոփման լռին բոպէներուն, գարնան սիւքի մը պէս կը մտնէր սենեակ եւ իր թարմ ու հնչուն ծիծաղներով կը վանէր տխրութիւնը:

Պապաճիիմ... ահաւասակ քեզի ծաղիկներ, վայրի ու գունաւէտ ծաղիկներ...

Ատիլէ կը նստէր հօրը անկողնին եզերքը, քօղը կը ձգէր ուսերուն վրայ եւ կը նայէր ծերունիին խորունկ գուրգուրանքով:

Ու Իպրահիմ իր աղջկան համար կը գտնար վաղեմի խօսքերը որով անոր խանձաւորութիւնը կապած էր, որով զայն օրօրած էր:

Իմ մինի մինիս, իմ աղանիս, աշքիս լո՛յսը... բայց ահա Ատիլէ անհանգիստ եղնիկի մը պէս կ'ոստնուր, իր ճոռողիւնով կը լեցնէր սենեակը եւ պարտէզ մեկնած պահուն մօրը յանդիմանութիւններուն կը պատասխանէր չարաճճիօրէն երգելով երբ արդէն բաւական հեռացած էր:

«Աննէս ալ ինձի քեզի չի տար կոր.

«Պարապ տեղը կէօրիճի ալ մի՛ դրկեր,

«Ամա՛ն, ամա՛, ամա՛ն:

Մայրը կը գայրանար ու գլուխը կը շարժէր դժգոհութեամբ:

Ա՛խ, աս աղջիկը, ի՞նչ պիտի ըլլայ այսպէս:

Անմիջապէս Բարահիմ Ատիլէի կողմը կը բռնէր:

Դեռ ասի մը ջուր ճայիլ է, դեռ մանկութիւն կայ հոգիին մէջ:

Անիկա կ'ուզէր որ իր ժպտուն ներողամտութիւնը աղջկանը մասին, փոխանցեր նաեւ մօրը որ կը յամատէր դժգոհ մնալ իր վայրէնի, իր անգուսպ աղջիկէն:

Երբ օր մը տարէց եւ յարգելի երեւոյթով կին մը իրենց եկաւ յայտնելու համար որ Ալի Հասան իրենց աղջիկը կնութեան կ'ուզէր, այր ու կին տատամտոտ մնացին: Ո եւ է մեծամտութիւն չէր կուրցնէր գիրենք, ծնած ու ապրած ըլլալով խոնարհ խաւի մէջ բայց միանգամայն վայելած ըլլալով իրենց առաքինութեան եւ տարիքին ընծայուած յարգանքը, ո եւ է սին եւ ունայնամիտ ձգտում չունէին իրենց աղջկան միջոցաւ ոստնելու իրենցմէ բարձր գտնուած շրջանակի մը մէջ: Ընդհակառակը այդ խնամիութեան գաղափարն իսկ գիրենք անհանգիստ կ'ընէր ու երկար ատենէ ի վեր խաղաղ եւ անվրդով ապրած մարդոց նման մը զգուշանային իրենց կեանքին մէջ ո եւ է փոփոխութիւն մտցնել:

Բայց խըսմէթի դէմ ալ երթալ չէր ըլլար ու այր եւ կին մտատանջ էին չկրնալով որոշումի մը յանգիլ: Քանի մը օրէն պատկառելի կէօրիւճին իր սեւ մետաքսեայ պիրիւմով պիտի երեւար ճամբուն ծայրէն. ի՞նչ պատասխան պիտի տային:

Յաճախ մայրը, իրենց կեանքին մէջ այս նոր մտած մտահոգութեան պատճառներէն գանգատելով բոլոր յանցանքը կը բեռցնէր աղջկանը վրայ:

Ա՛խ ան անգուսպը, անպիտան աղջիկը, եթէ եկող գացողին աչքին չերեւար, եթէ ինքզինքը աղէկ պահէր. ուրկէ ուր գինքը նշմարած պիտի ըլլային:

Ծերուկ Բարահիմ իր խաղաղ դէմքը կարկառած, աչքերը տենդոտ, մտիկ կ'ընէր, բայց միեւնոյն ատեն տարտամ ժպիտ մը կը լուսատրէր իր թուխ դէմքը:

Այս անակնկալ դեպքը պատճառ եղած էր որ ամենախիստ հսկողութեան ներքեւ մտնար Ատիլէ: Իրեն արգիլուեցաւ պարզ գեղջկուհիի մը պէս այլեւս թափառիլ իրենց եւ դրացի պարտեզներու մէջ. այլ եւս մայրամուտին չէր կրնար երթալ հորէն ջուր կրել տուն. իր մօրը հետ միայն դուրս պիտի ելլէր տնակէն եւ այն ալ քօղարկուած՝ աւելի պատշաճ խստութեամբ: Իր պարմանուհիի արդուզարդը փոփոխութիւն կրեց, վարդագոյն, դեղնորակ էնթարիները պիտի կրէր միայն տանը եւ պարտեզին մէջ իսկ դուրս ելլելու համար մայրը իր սեւ պիւրիմներէն մէկը յարմարցուց անոր բարակ հասակին այլեւս անհկա չէր կրնար երեւալ ո եւ է մարդկային արարածի իր թեթեւ, ծածանող եւ թափանցիկ ճերմակ քօղով որ հագիլ թէ գլուխը կը ծածկէր միայն:

Արշալոյսը նոր ծագեր էր եւ տնակին երկրորդ սենեակը, գետինը փռուած անկողիներու մէջ մայր ու աղջիկ կը քնանային տակաւին: Սուր եւ ջինջ երգը արքադաղի մը թրթռաց երկարօրէն ու կաթնային սպիտակութեամբ լոյսը կարծես սարսուաց մեղմութեամբ, շահպրակի եւ վարդի պարսատ բուրմունք մը արեւին առաջին շերմութենէն արտաշնչուած, անցաւ օդին մէջէն. բայց պատուհանին վանդակին ծակտիքներէն լոյս եւ բուրմունք սպրդեցան ներս. մեղմօրէն եւ երկարօրէն ծառերու սօսաւիւնը կը փսփսար հեռուներէն

Ատիլէ աչքերը բացաւ եւ արեգակին առաջին ճառագայթները լոյս տուին անոր նայուածքին. իր գրեթէ մանկական եւ ճկուն մարմինը հեշտօրէն ձգտուեցաւ թեթեւ վերմակին ներքեւէն. յանկարծ հաճելի եւ վրդովեցուցիչ մտածումներ խուժեցին գլխուն մէջ. աչքերը կրկին գոցեց զանոնք լաւ ըմբռնելու, անոնցմով տոգորուելու համար եւ խռովքի տենդագին սարսուռ մը անցաւ իր հոգիին մէջէն:

Գիտէր որ իր անձին շուրջ ամուսնութեան խնդիր մը կար. գիտէր նաեւ որ մէկը զինքը տեսեր ու հաւնէր էր եւ զինքը կնութեան կ'ուզէր. աստիճան մըն ալ կը գուշակէր թէ ով էր նշանածը բայց ո եւ է ստուգութիւն չկար. դեռ ոչ մէկը իրեն խօսեր էր այդ մասին եւ գիտէր նաեւ թէ, այդպէս լռութիւն պիտի պահէին իր ապագայ ամուսնի անուան, վիճակին, տարիքին վրայ մինչեւ վերջին այն օրը՝ երբ նիքեահէն վերջ անհկա պիտի գար իր քօղը բանալու:

Այս անստգութիւնը ոչ կ'ահաբեկէր զինքը ոչ ալ բուն հետաքրքրութիւն կ'արթնցնէր, այլ տեսակ մը հաճելի շփոթութիւն, անկայուն եւ գողտր զգայականութիւն մը. իր բոլոր զգացումները արթնցեր էին ամուսնութեան այս հաւանականութեան առաջ եւ կինը ծնած էր արդէն իր մէջ. իր կիրքերով, յուզումներով եւ պշրանքներով:

Իր շրթներուն կուգային յաճախ աշուղի մը բառերը որ ճամբուն վրայ երգեր էր օր մը. «Եթէ ծաղիկ ես, ծաղկած ես, եթէ պտուղ ես, հասունցած ես»:

Եւ հիմա բնական էր որ բարի եւ սիրագեղ անցորդ մը գտնուէր որ իր կեանքի ճամբուն վրայ հանդիպելով իրեն՝ քաղէր զինքը ծաղիկի մը նման:

Նորատեսակ գեղեցկութիւն մը փափկացուցեր ու ազնուացուցեր էր իր դիմագիծերը. ցանկալի դառնալու փափաքը յղկեր ու լրացուցեր էր կազմութեան մէջ եղող աղջկան իր թերութիւնները: Ատիլէի նայուածքը պահելով հանդերձ նախկին ջերմութիւնը, տոգորուեր էր տեսակ մը քաղցր տխրութեամբ: Թեթեւ հինայով շիկացած շագանակագոյն մազերուն խոպոպիքները աւելի ոլոր, աւելի փայլուն էին ու անոնց մէջ, կարծես, վերջալոյսը ճաճանչ մը մոռցեր էր, իր սովորաբար թխորակ եւ գունոտ այտերը նոր թափանցկութիւն մը ստացեր էին, որուն ներքեւէն կը զգացուէր վեհանձն եւ եռանդուն արինի արագ շրջանը: Տարփաւէտ եւ տարտամ յուզում մը մեղկօրէն շնորհալի կը դարձնէր անոր շարժումները եւ իրեն կուտար անմատչելի հուրիի երեւոյթը:

Երբ անհկա դուրս կ'ելլէր իր մօր հետ իր նուրբ ու մատղաշ իրանը պարփակած սեւ հագուստին մէջ, որ գլխուն զիծը կաղապարելով եւ վիզին պարապին վրայ ծփալով հաճելի կորութեամբ մը կը յանգէր ուսերուն եւ կ'իջնար մինչեւ քղանցքները, մէջքին նրբութիւնը ուրուագծելէ ետքը, անհկա խուսափող եւ զգուանուշ թռչունի մը սեւ ու հեռաւոր թռչունի մը զգայնութիւնը կը ներշնչէր եւ անհկա ունէր միայնգամայն բարեբար եւ ցանկալի ոգիի մը աննիթականութիւնը որ իր սիլուէթին խուսափող երագի մը խռովքը կուտար:

Ատիլէ այդ առաւօտուն, քունէն նոր արթնցած, միտքը կը պտտցնէր հին եւ նոր բաներու վրայ. փոքր հասակէն վարժուած էր խորհելու ամուսնութեան վրայ ոչ թէ կրօնական շփոթ խորհրդատրութեամբ, այլ շատ բնական պարզութեամբ. իր

միտքը ընտանի էր այդ գաղափարին եւ անոր կը սպասէր իբր անխուսափելիօրէն կատարուելիք իրողութեան մը. անիկա իր կեանքին մէկ հանգրուանը պիտի ըլլար, ինչպէս հետզհետէ մայրութիւնը ուրիշ հանգրուաններ պիտի հասցնէր զինքը: Այն օրէն որ սիրոյ զգացումին կարելիութիւնը փթթէր էր հոգւոյն մէջ, իր սէրը եւ գորովանքը թափառեր էին անորոշ եւ հեռաւոր իտէալներու շուրջ ու նիքեահին օրուան կը սպասէին կանգ առնելու համար մարդկային էակի մը վրայ:

Այլ սակայն, ամուսնութեան գաղափարը, ինքն ալ չէր գիտեր ինչո՞ւ կը կապուէր անմիջապէս թիկնեղ եւ հուժկու երիտասարդի մը պատկերին հետ. անիկա իր հօրը բարեկամներէն մէկուն որդին էր, դրացի ձիադարման մը, որ երբեմն կուգար խօսելու իր հօրը հետ: Իրենց գեղջկական կեանքի պարզութիւնը, թոյլատու եղած էր որ փոքրիկ հասակի մէջ իրարու հետ խաղալէ ետքը, չափահասութենէ ետքն ալ շարունակէին իրենց բարեկամութիւնը:

Ամատուան հեղցուցիչ եւ հեշտաւէտ իրիկուն մը, Ճէմիլ աճապարանքով եկաւ գօրանոցէն հրաման մը բերելու Իպրահիմին. յետոյ սեմին վրայ նստաւ յոգնութիւն առնելու համար, իր լայն կուրծքը հեւալով կ'ելեւեջեր ու դէմքը ողողուած էր քրտինքով: Ատիլէ գնաց գաւաթ մը բերելու եւ վերադարձին, իր աչքերուն վրայ հակած քօղին բանուածքներուն ընդմէջէն տեսաւ երիտասարդին ճակատը, սեւ մազերու փունջ մը, անոր յոգնութենէ նուաղած աչքերը եւ տեսաւ նաեւ Ճէմիլի ջղուտ եւ առնական բազուկը որ դէպի իրեն կ'երկարէր գաւաթը առնելու համար. վայրենի եւ բարկ հոտ մը, անոր արագօրէն շոգիացող քրտինքին մէջէն տարածուելով կը պարուրէր իսլամուհին: Ատիլէ անբացատրելի վախ մը զգաց. իր նեարդերը թրթռացին սարստալով իրեն թուեցաւ որ այդ բազուկը երկնցած էր ոչ թէ գաւաթը առնելու այլ զինքը յափշտակելու համար: Ճէմիլի ներկայացուցած ուժի եւ յոգնութեան խառն արտայայտութիւնը, անոր աչքերը, որոնք ոչ թէ տաքէն այլ իր տեսքէն կարծես մոլորուած էին զինքը խռովեցին. ուզեց փախչիլ, բայց Ճէմիլ անհամբերութեամբ գաւաթ առաւ եւ այդ պահուն անոր տենդագին եւ կոշտացած ձեռքերուն հպումը իր փափուկ մարմինը դողացուց:

Ատիլէ գնաց հեռուն, բայց հագիւ թէ քանի մը քայլ առած էր, երբ ետ դարձաւ եւ աչքերը յառեց իր վաղեմի ընկերոջը որ շրթունքը գաւաթին եզերքին դայցուցած, թէ՛ շուրը կը խմէր եւ թէ՛ իրեն կը նայէր: Ատիլէ նալըններուն ծիծաղուն աղմուկը անգամ մըն ալ ուստուտեց չոր հողին վրայ, բայց կրկին կեցան, կրկին ետեւ դարձաւ եւ ինքզինքը զգալով բաւական հեռու, պշրանքով եւ հեզնութեամբ ժպտեցաւ Ճէմիլին... ձիադարմանը ոտքի ելաւ, դեղեցաւ իր սրունքներուն, աչքերը շլացան վերջալոյսի ցոլքրէն եւ ձեռքովը տարտամ սպառնալիք մը ըրաւ պշրող եւ խուսափող աղջկան:

Անկէց ետքը եւս տեսակ մը անհանգստութիւն, անբացատրելի խպնոտութիւն մը պատճառ եղան որ Ատիլէ զգուշանայ Ճէմիլի հանդպելէ. մանկութեան պարզութիւնը անհետացեր էր այլ եւս. անիկա իր մէջ կինը կը տեսներ եւ ինքն ալ անոր մէջ այրը: Ատիլէ չէր խորշեր անկէ, բայց բնական զգացումով մը, կանացի ինքնապաշտպանութեան բնագոյով կը զգուշանար անոր նայուածքին ներքեւ ըլլալէ. բայց եւ այնպէս, ամէն անգամ որ ամուսինի մը մասին կը խորհէր Ճէմիլի ուժեղ եւ պարտասած պատկերը. անոր տարփանքէ խոժոռացած նայուածքը ու երկարած բազուկը կը ներկայանար իր մտքին:

Այսպէս էին, ու այսպէս ամուսնացեր էին իրեն բոլոր ծանօթ աղջիկները, այսպէս ամուսնացեր էր նաեւ մայրը, ներքին եւ անսասան համակերպութիւն մը այսպիսի ամուսնութիւն մը գաղափարին հետ կը հաշտեցնէր զինքը ու նաեւ տեսակ մը վայրագ ու խռովիչ բանաստեղծականութիւն կուտար կեանքի այս հանգամանքներուն:

Բայց քանի օրէ ի վեր Ճէմիլի պատկերը արուեր էր Ատիլէի մտքին մէջէն, որովհետեւ քաջ եւ գեղեցիկ ձիաոր մը, որ ա՛յնքան կը նմանէր հօրը այցելութեան եկող սպաներէն մէկուն, երեւցեր էր պարտեզին ցանկապատէն անդին, դիմացի մարգագետիններուն վրայ. քաջ եւ գեղեցիկ սպայ մը, որուն ասպանդակները ձիուն կողերը կը ծեծէին եւ ձեռքը կը զսպէր արաբականի մը սանձը, կենդանիին խօլ եւ ուստուտուն վագրի միջոցին:

Մօրը հետ պարտեզն էին. երեկոյեան գով հովէն իր դեղնագոյն էնթարիին քղանցքը կ'ելեւեջէր եւ քօղին ծայրերը կը թռչկրտէին ճերմակ թռչուններու պէս. օրուան սաստիկ տաքուն յաշորդեր էր յանկարծական գովութիւն մը եւ հողը,

Ծառերը, մարգագետինը թանձր շոգի մը կ'արտաշնչէր որ մշուշի մը պէս կը ծածանէր եւ յամրօրէն կը բարձրանար անօսրանալով. վերջալուսային ցուքեր մաղուելով այդ մատախտողին մէջ վարդագոյն երանգ մը կուտային անոր: Ձիաորը կը յառաջանար այդ լուսեղէն ամպին մէջէն, անհկա հեքեաթներու մէջ նկարագրուած հերոսի մը կը նմանէր. համագգեստին ոսկեղէն եւ արծաթեան երիզները կը պսպղային, սուրը կը շողար ու անհկա կուգար ոստոստելէն իր եռանդուն ձիուն վրայ, կարծես ընդառաջ թանկագին ու անօրինակ որսի մը... ու Ատիլէ գգաց, ներքին անբացատրելի գիտակցութիւնով մը, որ այդ որսը ինքն էր. սիրտը ուժգին կը բաբախէր եւ այնպիսի հեւք մը կը զգար կուրծքին մէջ որ կը նմանէր բռնուած թռչունի մը թեւաբախումներուն: Եթէ ձիաորը իրեն մօտենար, անշուշտ թէ՛ խելայեղօրէն պիտի փախչէր, բայց թէ՛ նաեւ որքա՛ն պիտի ցանկար բռնուիլ եւ անոր գօրեղ ձեռքին մէջ խաղալիք մը դառնալ... ու ձիաորը կը մօտիկնար, անհկա ձիէն իջաւ ցանկապատին առաջ, սանձին մէջ կազմուած հանգոյց մը քակելու համար. երիվարին տաքցած մարմինէն բարձրացող շոգին, երեկոյեան գով օդին մէջ նշմարելի, նոյնպէս կը լուսաւորուէր արեւին ճաճանչներէն. ձիուն թրթռուացող ռունգերը աւելի ճերմակ եւ աւելի թանձր շոգի մը կ'արձակէին որ կը բարձրանար վարդագոյն մշուշին մէջ առանց անոր խառնուելու:

Անսահմանելի եւ անկայուն բան մը ամբողջ բնութիւնը եւ արարծները կը ներդաշնակեցնէր իրարու հետ, երկրէս բարձրացած էին կարծես ու լուսեղէն ամպերու մէջ կը սաւառնէին: Ատիլէի դեղնագոյն էնթարին կը ծփծփար եւ երբեմն ալ փաթթուելով սրունքներուն, իր նուրբ իրանը կը կաղապարէր. սպան մոռցեր էր ձին ու անոր սանձին հանգոյցը. անոր բոցեղ աչքերուն լոյսը ծակելով մատախլապատ միջոցը՝ կը հասնէր Ատիլէի, գայն կը հմայէր, գայն կ'անշարժացնէր եւ անոր բոլոր կամքը ու կորովը կը խզէր:

Շո՛ւտ, շուտ... Ատիլէ՛, ներս եկուր:

Մայրը տեսեր էր վերջապէս ձիաորը ու աղջիկը կը հեռացնէր անկէ ինչպէս աղէտէ մը:

Անկեց ետքը շատ անգամներ Ատիլէ տեսեր էր քաջ եւ գեղեցիկ ձիաորը ցանկապատէն անդին, դիմացի մարգերուն վրայ ուր ճերմակ, շէկ եւ թուխ կովեր

կ'արածէին. վերջալոյսներուն անոնց երկար եւ յուզուած բառաշիւնը կը դողէր իր հոգին, երգ մը, նոր երգ մը կ'երգէր իր հոգիին մէջ իր աչքերուն եռանդը ու շրթներուն կարմիրը նուաղեր էին ու տխուր անստուգութիւն մը զինքը կը տանջէր. հապա եթէ նիքեահին օրը իր քօղը բացողը այդ ձիաւորը չըլլա՛ր... ու Ատիլէ խանգարուած երեակայութեան մէջ Ճէմիլի սեւ բագուկը կ'երկննար դէպի ինքը. զինքը կորզելու համար սէգ ու քաջ սպային գորովանքէն:

Այլ սակայն երբեմն ալ իր երագանքները կ'երթային իր ցանկութեան ուղղութեամբ. իր աչքերը կը ժպէին սիրագեղ եւ տարփաւետ նայուածքներու. կը տեսնէր իր ամուսնական սենեակի վանդակապատ պատուհանը ուրկէ յասմիկի եւ ճերմակ վարդի բուրմունք մը կը սպրդէր ներս եւ ուր կը սպասէր իր սիրելիին. սրնթաց ձիու մը պայտերուն ձայնը գետնին վրայ եւ ահա հերքը շնչասպառ կենդանիին ու իր սիրականը կուգար, սպայի համագգեստին մէջ շքեղ, սուրը կախած քովն ի վար եւ սիրտը տենջացող իր համբոյրին:

Ինչպէ՛ս կը սիրէր արդէն իր ձիաւորը:

Մէկ ոստումով Ատիլէ ելաւ անկողնէն ու այնքան աղմուկ հանեց որ մայրը արթնցաւ, շուտով պզտիկ կրակարանը փոխադրեցին քովի սենեակը ուր հայրը արդէն արթնցած իրենց կը սպասէր ու մինչ այր ու կին առաւօտեան խահուէ կը խմէին, ինքը տխուր, վիզը ծռած նստեր էր հօրը անկողնին եզերքը ու խորասուզուած էր մտատանջութեան մէջ:

Իպրահիմ եւ կինը սկսան վերջապէս մտահոգ ըլլալ Ատիլէի մասին, որովհետեւ հասկցան որ անիկա սիրոյ ցաւէն բռնուած է: Ու երբ կ'էօրիւճին անգամ մըն ալ եկաւ Ալի Հասանի կողմէ, առանց ետեւ առաջ նայելու, իրենց աղջկան ամուսնութեան հաւանութիւնը տուին: